ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍԻ

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր,
ՀՐԱՉՅԱ ՍԵՐԳԵՅԻ
ԾՊՆԵՑՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ
ԲԱՅԱԴՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ ՌԱՖԻԿ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ
ՉԱՏԻՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի փետրվարի 23-ին, ժամը 14.^{00}-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փող. 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թվականի հունվարի 22-ին:

002 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, դոցենտ Վ. Ս. Ալեքսանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտվող թեմայի արդիականությունը և հրատապությունը: Անասնապահությունը եղել և մնում է հանրապետության գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկը: Այն մեծ դերակատարում ունի հանրապետության բարձրորակ պարենամթերքի ապահովման գործում: Անասնաբուծական արտադրանքն ազգային հարստության նշանակալի մասն է կազմում: Անանսապահությունը, բուսաբուծության հետ համատեղ, կարևոր դեր ունի երկրի տնտեսական կառուցվածքում:

Հաշվի առնելով ագրարային ոլորտի կարևորությունը՝ հանրապետությունում իրականացված տնտեսական վերափոխումների սկիզբը դրվեց հենց գյուղատնտեսությունից: Առաջին քայլը հողի սեփականաշնորհումն էր, որին հաջորդեց գյուղատնտեսական կենդանիների, տեխնիկայի, արտադրական և սպասարկող շենքերի ու կառույցների մասնավորեցման գործընթացը: Նոր տնտեսական հարաբերությունների անցման դժվարություններով, ինչպես նաև օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ գործոններով պայմանավորված, սկզբնական շրջանում, կրճատվեց անասնագլխաքանակը, որն էլ անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների կրճատման պատճառ հանդիսացավ: Նշվածի հետ մեկտեղ, վերջին տարիներին նկատվեց անասնապահության կայունացման և որոշակի զարգացման միտումներ: Վերջինիս արդյունքում նկատվեց դրական տեղաշարժեր անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացման և մրցունակության բարձրացման ուղղությամբ:

Անասնապահությունում գրանցված դրական տեղաշարժերի հետ մեկտեղ հանրապետության բնակչությանն անասնաբուծական մթերքների ապահովման գործընթացում և անասնապահության ճյուղում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնց մեջ առանձնանում է ճյուղի մրցունակության բարձրացումը: Անասնապահական մթերքների արտադրության ծավալները չեն բավարարում ներքին շուկայի պահանջարկը, որի պատճառով հանրապետությունում դեռևս ցածր է որոշ անասնաբուծական մթերքների ինքնաբավության մակարդակը: Որոշ անասնաբուծական մթերքների, մասնավորապես՝ մանր եղջերավորների մսի և ձվի նկատմամբ գոյություն ունի համեմատաբար բարձր ինքնաբավության մակարդակ: Նշվածի հետ մեկտեղ՝ հանրապետությունում սպառվում է ֆիզիոլոգիական նորմաներից զգալիորեն պակաս ծավալներով անասնապահական մթերքներ: Պետք է նշել այն իրողությունը, որ անասնաբուծական մթերքների պահանջարկի զգալի մասը բավարարվում է ներմուծման հաշվին, որը հետևանք է հանրապետությունում անասնաբուծական մթերքների դեռևս ցածր մրցունակության և տեղական արտադրության հաշվին ներմուծման փոխարինման հնարավորությունների սահմանափակության:

Շուկայական տնտեսակարգը պահանջում է տնտեսության բոլոր ճյուղերում, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում վարել այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի ճյուղի մրցունակության բարձրացմանը, քանի որ վերջինս յուրաքանչյուր հասարակության բարեկեցության բարձրացման հիմնական միջոցներից մեկն է: Այն կայուն հիմքեր է ստեղծում ցանկացած երկիր հետագա զարգացման համար: Երկրի մրցունակության բարձրացման միակ ուղին մրցունակ արտադրանքի թողարկումն է: Այսինքն՝ ժամանակակից տնտեսագետները շեշտը դնում են մրցունակ արտադրանքի (ապրանքի) արտադրության վրա, որն իր հերթին կբերի ճյուղի մրցունակության բարձրացմանը, իսկ դրան հասնելու հիմնական ուղղությունը նշված ճյուղում առկա

խնդիրների լուծումն է: Տվյալ դեպքում, խոսքն անասնաբուծական մթերքների մրցունակության և այդ մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին է: Տեղին է նշել այն «կարգախոսը», որ մրցունակ արտադրանքն ապահովում է ճյուղի մրցունակությունը, իսկ դա էլ իր հերթին բերում է երկիր մրցունակությանը: Այսինքն՝ երկրի մրցունակության հիմքում արտադրանքի մրցունակությունն է: Չպետք է անտեսել այն փաստը, որ մրցունակությունը խթանում է արտադրվող արտադրանքի որակի բարձրացումը և տեխնոլոգիական առաջընթացը: Անկասկած, Հայաստանի նման փոքր ներքին շուկա ունեցող երկրի համար ապրանքների մրցունակության բարձրացումը երկրի տնտեսության և նրա ճյուղերի, այս դեպքում գյուղատնտեսության, մասնավորապես՝ անասնապահության զարգացման համար խիստ կարևոր ուղղություն է, որն ապագայում հնարավորություն կտա փոխարինել ներմուծումը և հնարավորինս ավելացնել արտահանման ծավալները:

«Մրցունակությունն է գլոբալացումից օգտվելու ու դրա զոհը չդառնալու բանալին: Երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի բարեկեցության մակարդակն ու տնտեսական ինքնորոշումը կախված են մրցունակության բարձր աստիճանի հասնելու կարողությունից»[1]:

Հանրապետությունում անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման ուղղությամբ, շուկայական տնտեսավարման պայմաններում, համապարփակ ուսումնասիրություններ չեն իրականացվել, ինչը վկայում է երկրի տնտեսության տարբեր ճյուղերի և ենթաճյուղերի մրցունակության բարձրացման հրատապության մասին: Երկրի պարենային անվտանգության ապահովման առաջնահերթությունից ելնելով՝ առավել հրատապ է անասնաբուծության, մասնավորապես՝ անասնաբուծական առանձին մթերքների մրցունակության բարձրացումը: Վերջինս պահանջում է համակողմանի ուսումնասիրությունների հիման վրա բացահայտել նշված բնագավառում մրցունակության բարձրացման հիմնախնդիրները և առաջադրել դրանց լուծման հիմնավորված ուղղությունները: Սրանցով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունն ու կատարման անհրաժեշտությունը:

<u>Հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները:</u> Ատենախոսության հիմնական նպատակը՝ անասնաբուծության ճյուղի ներկա վիճակի, վերջինիս ուղղությամբ կատարված հետազոտությունների համակողմանի ուսումնասիրության արդյունքում անասնաբուծական մթերքների մրցունակության խնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների առաջադրումն է:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել արտադրանքի մրցունակությունը, դրա վրա ազդող գործոններն ու գնահատման մեթոդները,
- վերլուծել և գնահատել գյուղատնտեսության ոլորտի մրցունակության առանձնահատկությունները,
- ուսումնասիրել և վերլուծել հանրապետության անասնապահության վիճակն ու առանձնահատկությունները, գնահատել անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնախնդիրները,
- գնահատել հանրապետությունում անասնաբուծական մթերքների մրցունակության վրա ազդող հիմնական գործոնները,

[1]Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2008, «Տնտեսություն և արժեքներ», Հետազոտական կենտրոն, 2008.- էջ 13

- ուսումնասիրել անասնաբուծական հիմնական մթերքների իրացման միջին գների վրա ազդող գործոնների քանակական բնութագիրը,
- ուսումնասիրել կերապահովվածության վիճակը և դրա բարելավման հնարավորություններն անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման ուղղությամբ,
- մշակել ՀՀ-ում անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնական ուղղությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ գյուղատնտեսության ոլորտն է, մասնավորապես՝ անասնապահության ճյուղը, անասնապահությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները, իսկ առարկան՝ անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների առաջադրումը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության ուսումնասիրության տեսական հիմք են հանդիսացել հայրենական ու արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ագրոպարենային համակարգի տարբեր կողմերը կարգավորող օրենքները և նորմատիվային փաստաթղթերը, ինչպես նաև այն որոշումները և ծրագրերը, որոնք առնչվում են ուսումնասիրության թեմային:

Ատենախոսության տեղեկատվական հիմք են հանդիսացել՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության տարբեր հրատարակված նյութերն ու տվյալները, ինչպես նաև հեղինակի կողմից կատարված սեփական ուսումնասիրությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական ու տրամաբանական, համեմատական ու գործոնային, կոռելյացիոն վերլուծությունների, գիտական աբստրակցման, ինդուկցիայի և դեդուկցիայի, աղյուսակային և գծապատկերային, էկոնոմետրիկական և այլ մեթոդներ:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Հետազոտության հիմնական նորույթը կայանում է նրանում, որ հանրապետության անասնաբուծության ճյուղի համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները: Հիմնական գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով, մասնավորապես.

- բացահայտվել են ՀՀ-ում անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնական խնդիրները և համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում առաջադրվել են դրանց լուծման ուղիները,
- բացահայտվել և կատարված վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է ՀՀ-ում անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման վրա ազդող գործոնների կազմը,
- գնահատվել է գյուղացիական տնտեսությունների կողմից անասնաբուծական մթերքների իրացման միջին գների վրա մի շարք գործոնների, մասնավորապես՝ ապրանքայնության մակարդակի, մթերատվության, համախառն արտադրանքի քանակական ազդեցությունը,
- մշակվել են անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնական ուղղությունները՝ կերարտադրության կառուցվածքի բարելավման, կեր-

ապահովվածության մակարդակի բարձրացման, տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացման, անասնաբուժական համակարգի կարգավորման, անասնաբուծական մթերքների իրացման և վերամշակման համակարգերի բարելավման, ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման, վարկավորման մեխանիզմների կատարելագործման միջոցով:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Սույն ատենախոսությունում մշակված միջոցառումների և առաջարկությունների գործնական կիրառությունը կնպաստի ՀՀ անասնապահության ճյուղի մրցունակության, մասնավորապես՝ անասնաբուծական մթերքների արտադրության արդյունավետության բարձրացմանը: Կաթի և տավարի մսի մրցունակության վրա ազդող գործոնների էկոնոմետրիկ վերլուծության, ինչպես նաև ինքնարժեքի գնահատման ուղղությամբ կատարված հաշվարկների արդյունքները կարող են կիրառվել անասնապահությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների կողմից: Այն օգտակար կարող է լինել պետական կառավարման և տարածքային ինքնակառավարման մարմինների կողմից ռազմավարական ծրագրերի մշակման ու ոլորտի զարգացման առաջարկությունների իրականացման գործընթացում, ինչպես նաև այն կիրառություն կարող է ունենալ գիտահետազոտական և ուսումնական նպատակների համար: Կատարված հետազոտությունների արդյունքները՝ իրենց գիտական ու գործնական նշանակությամբ և օգտագործման հնարավորություններով, կարևոր են ՀՀ անասնապահության ճյուղի մրցունակության բարձրացման և զարգացման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի Ագրոբիզնեսի կառավարման, Ագրոբիզնեսի կազմակերպման և ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական հինգ հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 150 էջի վրա՝ ներառյալ գրականության ցանկը, պարունակում է 23 աղյուսակ և 5 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Մրցունակության էությունը, տեսական հիմունքները և գյուղատնտեսության ոլորտում դրա առանձնահատկությունները» գլխում ներկայացվել են արտադրանքի (ապրանքի) մրցունակության էությունը և դրա վրա ազդող գործոնները, ինչպես նաև արտադրանքի (ապրանքի) մրցունակության գնահատման գործընթացում կիրառվող մոտեցումները և գյուղատնտեսության ոլորտի մրցունակության առանձնահատկությունները:

Շուկայական տնտեսության գոյության հիմնական պայմաններից մեկն է հանդիսանում մրցունակությունը, քանի որ շուկայական տնտեսակարգին բնորոշ է ազատ մրցակցությունը և շուկայում առկա բազմաթիվ համանման ապրանքները: Այս պայմաններում գերագույն խնդիրն ապրանքի իրացումն ու շահույթի ստացումն է, որի համար արտադրողը պետք է մտածի մի բանի մասին, այն է համանման ապրանքների նկատմամբ ունենա առավելություններ, այսինքն՝ լինի մրցունակ: Ուստի կարծում ենք արդարացված է նշված հարցի քննարկումը, այն է անասնաբուծական մթերքների մրցունակության դիտարկումը, քանի որ ակնհայտ է այն փաստը, որ այսօր ազատ մրցակցային շուկայի լավագույն օրինակը գյուղատնտեսական, մասնավորապես՝ անասնաբուծական մթերքների շուկան է:

Մրցունակության խնդիրը հիմնական տեղ է զբաղեցնում մրցակցության տեսությունում և պրակտիկայում, քանի որ շուկայում գոյատևման և նպատակին հասնելու համար կոշտ մրցակցային պայքարում յուրաքանչյուր պետություն, ճյուղ, արտադրանք պետք է ունենա որոշակի առավելություններ մրցակիցների նկատմամբ:

«Մրցունակություն» հասկացությունը տարբեր կերպ է մեկնաբանվել տարբեր արտասահմանյան և հայրենական հեղինակների կողմից, որոնք կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ. մրցունակությունը համալիր սոցիալ-տնտեսական բնութագիր է, որը ցույց է տալիս արտադրանքի (ապրանքի) գերազանցության մակարդակն այլ համանման արտադրանքների (ապրանքների) նկատմամբ: Այսինքն՝ արտադրանքի (ապրանքի) մրցունակությունը տնտեսական ու սպառողական բնութագրիչների այնպիսի հարաբերակցություն է, որն արտադրանքին, որոշակի ժամանակահատվածում, կոնկրետ շուկայում ապահովում է հաստատուն դիրք մրցակիցների նկատմամբ:

Մրցունակությունը դիտարկվում է արտադրանքի (ապրանքի), ճյուղի և երկրի մակարդակով: Սակայն տնտեսագիտական գրականության և գիտական հրապարակումներում մեծ ուշադրության է արժանացել հատկապես արտադրանքի (ապրանքի) մրցունակություն հասկացությունը, քանի որ մրցունակ արտադրանքն (ապրանքը) ապահովում է ճյուղի մրցունակությունը, որն էլ իր հերթին բերում է երկիր մրցունակության ապահովմանը և բարձրացմանը (գծապատկեր 1):



Գծապակեր 1: Մրցունակության մակարդակները

Գյուղատնտեսությունը վճռական դեր ունի հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման, ինչպես նաև պարենային անվտանգության ապահովման գործում: Դրանով է բացատրվում ներկայումս ճյուղում նորարարությունների և բարեփոխումների անհրաժեշտությունը, որոնց հիմնական նպատակն է ճյուղի մրցունակության ապահովումն ու հետագա բարձրացումը:

Այսինքն՝ յուրաքանչյուր պետության հիմնական նպատակը յուրաքանչյուր ճյուղի, արտադրանքի մրցունակության ապահովումն է, որի ուղղությամբ պետությունը իրականացնում է որոշակի քաղաքականություն (բարձրորակ սերմերի տրամադրում, նոր առավել բերքատու սերմերի ներմուծում, կերահանդակների վիճակի բարելավում, տոհմային անասնապահության զարգացում, որակյալ թունաքիմիկատների ապահովում, գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, վերամշակող ձեռնարկությունների վերազինում նորագույն տեխնիկայով ու տեխնոլոգիայով և այլն): Մեծ ուշադրություն պետք է դարձնել հենց այն միջոցառումներին, որոնք ուղղված կլինեն գյուղատնտեսական ապրանքների, մասնավորապես՝ անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացմանը:

Արտադրանքի մրցունակության գնահատման համար կարևոր տեղ են հատկացվում մրցունակության վրա ազդող տարբեր գործոններին, որոնք բնութագրում են նշված հասկացությունը: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել արտադրանքի գնին, որակին, սպասարկմանը, ինչպես նաև անհատական ու հոգեբանական գործոններին:

Անցումը շուկայական տնտեսությանն էլ ավելի նպաստեց այն բանին, որ տնտեսագետների ուշադրության կենտրոնում հայտնվի հատկապես գյուղատնտեսական մթերքների մրցունակության ապահովման և բարձրացման հիմնախնդիրը, քանի որ գյուղատնտեսական մթերքների շուկան լինելով ազատ (կատարյալ) մրցակցային շուկայի դասական մոդել, ստիպում է արտադրողներին շուկա դուրս գալուց առաջ մտածել մրցունակ արտադրանքի արտադրության մասին: Տվյալ դեպքում, պետք է նշել, որ գյուղատնտեսական մթերքների մրցունակության ապահովմանը նպաստող կարևոր նախապայմաններից մեկն այն առանձնահատկություններն են, որոնք բնորոշ են ագրարային ոլորտին, մասնավորապես՝ գյուղատնտեսության ճյուղին: Ուստի աշխատանքում ամբողջական կերպով ներկայացվել են այն առանձնահատկությունները, որոնց իմացությունն ու կիրառումը կնպաստի գյուղատնտեսական մթերքների մրցունակության ապահովմանն ու բարձրացմանը:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության, մասնավորապես՝ անասնապահության ճյուղի մրցունակության առանձնահատկությունները և այն պայմանավորող գործոնները» գլխում</u> ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ճյուղի և անասնապահության առանձնահատկությունները, բացահայտվել են անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնախնդիրները, ինչպես նաև առանձին ուսումնասիրվել են անասնաբուծական մթերքների մրցունակության վրա ազդող գործոնները:

Ցանկացած երկրի հիմնական նպատակներից մեկը տնտեսության մրցունակության բարձրացումն է, իսկ այդ մրցունակության բարձրացումը պետք է ապահովվի հատկապես այն ճյուղերի հաշվին, որոնք ունեն համապատասխան ներուժ: Աշխատանքում ուսումնասիրվել և ներկայացվել են գյուղատնտեսական, մասնավորապես՝ անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնախնդիրը, ելակետ ունենալով այն որ, գյուղատնտեսությունն իր երկու կարևոր ենթաճյուղերով կարող է դառնալ այն հենասյունը, որի միջոցով կարելի է հասնել երկրի տնտեսության մրցունակության բարձրացմանը:

Անասնաբուծական հիմնական մթերքները հանդիսանում են բնակչության սննդի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչները: Ուստի, առաջնահերթ խնդիրների շարքում է գտնվում անասնաբուծական մթերքների մրցունակության ապահովումն ու

բարձրացումը: Առանձնացվել են այն հիմնական խնդիրները, որոնց լուծումը կհանգեցնի անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացմանը: Մասնավորապես՝ խոսքն այնպիսի խնդիրների մասին են, ինչպիսիք են՝ կերապահովումը, արտադրության ինտենսիվ զարգացումը, կենդանիների սելեկցիայի առաջընթացը, կենդանիների գենոֆոնդի պահպանումն ու բարելավումը, կենդանիների անասնաբուժական վիճակի բարելավումը, մասնավոր անասնաբուժական համակարգի ամրապնդումը, գյուղատնտեսության ֆինանսավարկային համակարգի բարելավումը, ոլորտի ռիսկերի նվազումն ու ապահովագրական համակարգի ներդրումը, վերամշակող ընկերություններում կապիտալ ներդրումների ավելացումը, իրացման համակարգի բարելավումը, տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկը, ինչպես նաև անասնաբուծական մթերքների գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությունը և այլ խնդիրներ:

Աշխատանքի տվյալ գլխում անդրադարձ է կատարվել անասնաբուծական մթերքների մրցունակության ապահովման գործում կարևոր համարվող անասնապահության ճյուղի առանձնահատկություններին: Հիմնականում ներկայացվել են այն առանձնահատկությունները, որոնց իմացությունը կնպաստի անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացմանը:

Տվյալ գլխում հանրապետության կտրվածքով ներկայացվել է անասնագլխաքանակի փոփոխությունը և վերջին տարիներին նկատվող աճը: Անասնագլխաքանակի աճն իր հերթին նպաստել է անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների աճին (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.
ՀՀ-ում անասունների և թռչունների գլխաքանակը բոլոր կարգի տնտեսություններում ըստ 2011-2015թթ. *
(հունվարի 1-ի դրությամբ, հազ. գլուխ)

Անվանումները	2011	2012	2013	2014	2015	Շեղումը (+,-) 2015թ.՝ 2014թ. նկատմամբ	
						բացարձակ	հարաբերական
Խոշոր եղջերավոր անասուններ	571.4	599.2	661.0	677.6	688.6	11	1,6
այդ թվում՝ կովեր	272.6	283.3	303.3	309.6	313.9	4,3	1,4
Ոչխարներ և այծեր	532.5	590.2	674.7	717.6	745.8	28,2	3,9
Խոզեր	114.8	108.1	145.0	139.8	142.4	2,6	1,8
Թռչուններ	3462.5	4023.5	4050.0	4101.2	4145.5	44,3	1,1

* Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015.- էջ 303 (armstat.am)

Ինչպեսցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, 2015թ. գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը նախորդ տարվա համեմատ աճել է, որն էլ իր հերթին հանգեցրել է անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների աճին: Այդ են վկայում աղյուսակ 2-ի տվյալները:

Աղյուսակ 2.

ՀՀ անասնաբուծական մթերքների արտադրությունը բոլոր կարգի տնտեսություններումըստ 2010-2014թթ. *

/հազ. տոննա/

Անվանումները	2010	2011	2012	2013	2014	Շեղումը (+,-) 2014թ. 2013թ. նկատմամբ	
						բացար-ձակ	հարաբեր-կան
Միս, սպանդային քաշով /հազ.տոն./	69.5	71.7	73.0	83.4	92,7	9,3	11,1
Կաթ, հազ.տոննա	600.9	601.5	618.2	657.0	700,4	43,4	6,6
ձու,մլն հատ	702.2	633.6	658.1	615.2	641,8	26,6	4,3
բուրդ (ֆիզ.քաշ.), տոննա	1188	1230	1290	1426	1477	51	3,6

*Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015.- էջ 302 (armstat.am)

Աղյուսակի տվյալները վկայուն են, որ բոլոր մթերքների գծով նկատվել է արտադրության ծավալների աճ: Սակայն դրա հետ միաժամանակ որոշ անասնաբուծական մթերքների ինքնաբավության մակարդակը դեռևս ցածր է միջին ցուցանիշից (աղյուսակ 3), ինչը վկայում է ճյուղում դեռևս առկա խնդիրների մասին: Նշված խնդիրներով է պայմանավորված անասնաբուծական մթերքների ցածր մրցունակությունը:

Աղյուսակ 3.

ՀՀ անասնաբուծական մթերքներնի ինքնաբավության մակարդակը**

(տոկոս)

Անասնաբուծական մթերքներ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Ձու	99.2	94.1	99.5	96.3	97.2
Կաթ (բացի կարագից)	97.2*	82.9	83.1	85.0	84.2
Տավարի միս	84.8	78.4	81.6	86.2	87.9
Խոզի միս	39.9	43.3	38.3	46.3	54.2
Ոչխարի և այծի միս	100	100	100	100	103.4
Հավի միս	12.3	12.2	19.1	19.8	20.0

* կարագը ընդգրկված չէ

* Պարենային ապահովություն և աղքատություն, 2013թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2014.- էջ 67-70,Պարենային ապահովություն և աղքատություն, 2015թ. հունվար-սեպտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015.- էջ 69,72,75

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ խոսքը հիմնականում թռչնի և խոզի մսի ինքնաբավության մակարդակների մասին է, որոնք 2014թ. համապատասխանաբար կազմել են 20.0 % և 54.2 %: Երկրում խոզի մսի արտադրության ծավալները սպանդային քաշով 2014թ. կազմել է 16.2 հազ. տոննա, նույն ժամանակահատվածում հանրապետության տարածք է ներմուծվել 14.0 հազ. տոննա միս, որը բավական չէ երկրում խոզի մսի պահանջարկի բավարարման համար, ինչն էլ իր հերթին բերում է խոզի մսի գնի անընդհատ փոփոխման:

Ինչպես տեսնում ենք թռչնի մսի ինքնաբավության մակարդակը միջինից ցածր է: 2014թ. հանրապետության տարածքում թռչնի մսի արտադրության ծավալները սպանդային քաշով կազմել 8.4 հազ. տոննա, քանի որ հանրապետության թռնաբուծական ֆաբրիկաները հիմնականում մասնագիտացված են ձվի արտադրության գծով և, ելնելով համեմատական առավելությունների տեսությունից, ավելի նպատակահարմար է թռչնի մսի ներկրումը: Նույն ժամակահատվածում թռչնի մսի ներմուծման ծավալները կազմել է 33.8 հազ. տոննա: Փաստենք, որ թռչնի մսի արտադրության ծավալների ավելացմանը լրջորեն խոչընդոտում է հատիկային կերի անհրաժեշտ բազայի բացակայությունը:

Ինչպես տեսնում ենք, հանրապետությունում բացի խոզի և թռչնի մսից, մնացած անասնաբուծական մթերքների գծով ինքնաբավության մակարդակը բարձր է: Մասնավորապես՝ ձվի առումով ինքնաբավության մակարդակը 2014թ. կազմել է 97.2 %, որը հիմնականում բավարարվում է ներքին արտադրության հաշվին: Չնայած նրան, որ ձվի ինքնաբավության մակարդակը շատ բարձր է, սակայն նկատում ենք, որ դեռևս հանրապետության տարածք է ներմուծվում ձվի որոշակի քանակ: 2014թ. հանրապետության տարածք է ներմուծվել 1.0 հազ. տոննա ձու, որը հիմնականում նախատեսված է ինկուբացիայի համար: Կաթի և կաթնամթերքի առումով (բացառությամբ կարագի) բնակչության ինքնաբավության մակարդակը բավականին բարձր է: 2014թ. կաթի արտադրության ծավալը կազմել է 700.4 հազ. տոննա: Նույն ժամանակահատվածում ներմուծման ծավալը կազմել է 151.9 հազ. տոննա: Ելնելով վեր է նշվածից՝ հանրապետությունում 2014թ. կաթի ինքնաբավության մակարդակը կազմել է 84.2% (ներառում է նաև կարագը): Տավարի մսի առումով հանրապետությունում ինքնաբավության մակարդակը միջին մակարդակից բարձր է: 2014թ. տավարի մսի արտադրության ծավալները սպանդային քաշով կազմել է 59.0 հազ. տոննա, նույն ժամանակահատվածի համար ներմուծումը կազմել է 8.4 հազ. տոննա: Հանրապետությունում տավարի մսի ինքնաբավության մակարդակը կազմել է 87.9%: Ոչխարի և այծի մսի ինքնաբավության մակարդակը հանրապետությունում կազմել է 103.4 %: Վերջին տարիներին ոչխարի միս չի ներկրվել, այլ ընդհակառակը՝ 2009թ. սկսել են արտահանվել: Որոշակի մտահոգության տեղիք է տալիս ներքին շուկայում ոչխարի մսի բարձր գինը, ինչը պայմանավորված է, ինչպես արդեն նշեցինք, կենդանի ոչխարի արտահանման ծավալների ավելացման հետ: Սակայն համոզված ենք, որ դա ժամանակավոր բնույթ է կրում և ճյուղի զարգացումն աստիճանաբար կհանգեցնի ոչխարի մսի գնի կարգավորմանը (աղյուսակ 4.):

Աղյուսակ 4.

ՀՀ անասնաբուծական մթերքների արտադրության և ներմուծման ծավալները 2010-2014թթ.[2] *

(հազ. տոննա)

Անասնա-բուծական մթերքներ	2010		2011		2012		2013		2014	
	արտա-դրություն	ներմու-ծում	արտա-դրություն	ներմու-ծում	արտա-դրություն	ներմու-ծում	արտա-դրություն	ներ-մուծում	արտա-դրություն	ներմու-ծում
Միս, այդ թվում	69.5	59.5	71.7	66.9	73.9	62.1	83.4	57.2	92.7	56.2
Տավարի միս	48.0	8.9	48.2	13.4	47.6	11.3	53.6	8.8	59.0	8.4
Խոզի միս	7.9	12.0	9.4	12.4	9.5	15.5	12.6	15.0	16.2	14.0
Ոչխարի և այծի միս	8.2	0.0	8.4	0.0	8.5	0.0	9.0	0.0	9.1	0.0
Հավի միս	5.4	38.6	5.7	41.1	8.3	35.3	8.2	33.4	8.4	33.8
Կաթ	600.9	21.4	601.5	128.8	618.2	134.8	657.0	133.6	700.4	151.9
Ձու	38.6	0.5	34.9	2.2	36.2	0.2	33.8	1.3	35.3	1.0

* ներմուծված անասնաբուծական ծագման մթերքները վերածված են անասնաբուծական մթերքների

[2] Պարենային ապահովություն և աղքատություն, 2013թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2014.- էջ 67-70, Պարենային ապահովություն և աղքատություն, 2015թ. հունվար-սեպտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015.- էջ 69,72,75

Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել են այն գործոնների համախումբը, որոնք ազդում են անասնաբուծական մթերքների մրցունակության վրա: Մասնավորապես՝

- Նորարարական գործընթացի դանդաղ ընթացքը, որը բերում է նոր և առաջավոր տեխնոլոգիաների և տեխնիկայի ներդրման ցածր մակարդակի:
- Ոլորտի ինտենսիվացման ցածր մակարդակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անասնապահության բնագավառում դեռևս շարունակվում է արտադրության էքստենսիվ բնույթը: Այն հանգամանքը, որ դեռևս ցածր է կենդանիների մթերատվությունը, արդեն իսկ խոսում է ինտեսիվացման ցածր մակարդակ ունեցող անասնապահության մասին:
- Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ավանդական պայմանների գերակշռությունը: Շատ տնտեսություններ չեն կարողանում մրցունակ արտադրանք թողարկել ընթացիկ կապիտալի, անբավարար շինությունների, սարքավորումների և տեխնիկական միջոցների բացակայության պատճառով, ինչը վկայում է այն մասին, որ հանրապետությունում դեռևս լիարժեք չեն հաղթահարվել նահապետական անցյալի հոգեբանությունը և ավանդույթները:
- Կերի պակասն ու որակական հատկանիշների նվազումը, ինչպես նաև եղած հնարավորությունների ցածր արդյունավետությամբ օգտագործումը:
- Գինը և այն գործոնները, որոնք ազդում են անասնաբուծական մթերքների գների փոփոխության վրա: Ներկայումս գյուղատնտեսության մեջ չի իրականացվում արտադրանքների գնային քաղաքականություն, գներն ազատականացվել են և պայմանավորված են շուկայական առաջարկով և պահանջարկով: Սակայն, վերջին շրջանում նկատվում է գյուղատնտեսական մթերքների, մասնավորապես՝ անասնաբուծական մթերքների գնաճ: Աճել են և՛ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացվող մթերքների, և՛ նույն մթերքների հանրապետության միջին մանրածախ գները: Սակայն աճը տեղի է ունեցել ոչ համամասնորեն: Այսինքն՝ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացվող ապրանքների գներն աճել են ավելի քիչ քան, ընդհանուր վերցրած հանրապետության միջին մանրածախ գները: Այդ են վկայում գծապատկեր 2-ում ներկայացված տվյալները:
- Իրացման գործուն համակարգի բացակայությունը: Մինչև բարեփոխումներն արտադրողների առջև խնդիր չկար իրացման հետ կապված, քանի որ վերջին հաշվով որպես գնորդ հանդես էր գալիս պետությունը: Սակայն այսօր առկա են արտադրանքի իրացման հետ կապված խնդիրներ: Անասնաբուծական մթերքների իրացման ժամանակ իրենց բացասական ներգործություն են ունենում շուկայական ենթակառուցվածքների թերզարգացվածութունը՝ սպանդանոցների բացակայությունը, պահեստների և սառնարանային տնտեսությունների սահմանափակ հնարավորությունները, անասնաբուծական մթերքները տեղափոխող տրանսպորտային համապատասխան միջոցների բացակայությունը և ճանապարհների վիճակը՝ հատկապես միջհամայնքային, ինչպես նաև կազմակերպաիրավական որևէ կարգավիճակ չունեցող բազմաթիվ միջնորդների առկայությունը:



Գծապատկեր 2: 2014թ. ՀՀ անասնաբուծական մթերքների 1 միավորի գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման և միջին մանրածախ գները

<u>Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ անասնապահության ճյուղի մրցունակության բարձրացման խնդիրների լուծման հիմնական ուղղությունները» գլխում</u> կատարվել է անասնաբուծական մթերքների մրցունակության վրա ազդող գործոնների գնահատում, դիտարկվել է կերապահովածության մակարդակի բարձրացման և կերարտադրության կառուցվածքի բարելավման հիմնախնդիրներն անասնաբուծական մթերքների մրցունակության ապահովման գործում, ինչպես նաև առաջադրվել են անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնական ուղղությունները:

Այսօր ամբողջ աշխարհում առաջնային խնդիրների շարքում կարևորվում է մրցունակ արտադրանքի (ապրանքի) արտադրության խնդիրը: Ուստի դիտարկվող հարցը նույնպես առաջնային է, քանի որ գործունենք անասնաբուծական մթերքների մրցունակության ապահովման և բարձրացման հետ: Դրա համար ճյուղի գերակա խնդիրների շարքում է գտնվում անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հարցն ու եթե, հաշվի առնենք հանրապետության սահմանափակ հողատարածությունները, բուսաբուծության ճյուղի բարձր ռիսկայնությունը, ապա կարող ենք ասել, որ անասնաբուծությունը, շնորհիվ համեմատաբար ցածր ռիսկայնության և առկա ռեսուրսների լիարժեք օգտագործմամբ, մրցունակ արտադրանքի թողարկմամբ կարող է դառնալ որոշիչ լծակ հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների ավելացման գործում:

Հանրապետության անասնաբուծական մթերքների մրցունակության փոփոխության վրա ազդող գործոնների շարքում իրենց ուրույն տեղն ունեն գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գները և դրա վրա ազդող տարբեր գործոնների ազդեցության չափի գնահատումը: Վերջինս հաշվի առնելով՝ անասնաբուծական մթերքների գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գների վրա ազդող գործոնային վերլուծության համար 15 տարիների կտրվածքով կատարվել է հետազոտություն և որպես ազդող գործոններ ընտրվել արտադրանքների ապրանքայնության մակարդակը, մթերատվությունը, իսկ տավարի մսի արտադրության համար՝ համախառն արտադրանքը: Արդյունքները երևում են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5.

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքային ցուցանիշներ

	Ռեգրեսիոնհավասարման տեսքը	Կոռելյացիայի ընդհանուր գործակիցը	Դետերմինացիայի գործակիցը
Տավարի միս	$\overline{Y}_i$ = -1062.17+8.360x_1 +43.603x_2	$R_{yx_1x_2} = 0.834$	$R^2{}_{y\,x_1x_2} = 0.695$ (69.5%)
Կաթի արտադրություն	$\overline{Y}_i$=-87.69+0.295x_1 +0.101x_2	$R_{y\,x_1x_2} = 0.734$	$R^2{}_{y\,x_1x_2} = 0.539$(53.9%)
Ձվի արտադրություն	$\overline{Y}_i$= 155.74+ 0.525x_1 +1.101x_2	$R_{y\,x_1x_2} = 0.692$	$R^2{}_{y\,x_1x_2} = 0.478$ (47.8%)

Տավարի մսի արտադրության դեպքում գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գնի մակարդակի տատանումների շուրջ 69.5 %-ը պայմանավորված է ապրանքայնության և տավարի մսի համախառն արտադրանքի մակարդակների համատեղ տատանումներով, իսկ մնացած 30.5 %-ը՝ այլ և պատահական գործոնների արդյունք են:

Կովի կաթի արտադրության դեպքում գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գնի մակարդակի տատանումների շուրջ 53.9 %-ը պայմանավորված է ապրանքայնության մակարդակի և կովերի կաթնավության համատեղ տատանումներով, իսկ մնացած 46.1 %-ը՝ այլ և պատահական գործոնների արդյունք են:

Ձվի արտադրության դեպքում գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գնի մակարդակի տատանումների շուրջ 47.8 %-ը պայմանավորված է ապրանքայնության մակարդակի և ձվատվության համատեղ տատանումներով, իսկ մնացած 52.2 %-ը՝ այլ և պատահական գործոնների արդյունք են:

Կատարված վերլուծությունը հանգեցրել են հետևյալ արդյունքների.

Տավարի մսի ապրանքայնության մակարդակի 1 %-ով բարձրացումը, այլ հավասար պայմաններում, տավարի մսի գինը կբարձրացնի 8.4 դրամով, իսկ համախառն արտադրանքի 1000 տոննա ավելացումը կբերի է 43.6 դրամով տավարի մսի գնի բարձրացման:

Կաթի արտադրության դեպքում՝ ապրանքայնության մակարդակի 1 % ավելացումը, այլ հավասար պայմաններում, կաթի գինը կբարձրանա 0.3 դրամով, իսկ հետազոտվող ժամանակահատվածում յուրաքանչյուր 1 կգ կաթնատվության մակարդակի ավելացումը կբերի 0.1 դրամով գնի ավելացմանը:

Ձվի ապրանաքայնության մակարդակի 10 %-ով ավելացումը, այլ հավասար պայմաններում, ձվի գինը կբարձրացնի 5.2 դրամով, իսկ ձվատվության մակարդակի 10 հատ ավելացումը կբերի 11 դրամով 10 ձվի գնի ավելացմանը:

Իրականացված հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ անասնապահության զարգացման գերակա ուղին կերային կայուն բազայի առկայությունն է, քանի որ զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ կենդանու մթերատվությունը, այլ հավասար պայմաններում, 60 %-ով կախված է կերակրումից և միայն 30 %-ով՝ տոհմային աշխատանքներից: Հաշվի առնելով վերը նշվածը՝ հաշվարկվել են կաթի և տավարի մսի ինքնարժեքները: Արդյունքում ստացվել է, որ նշված մթերքների ինքնարժեքում մեծ է կերի տեսակարար կշիռը՝ 70 և ավել %:

Հաշվարկեների արդյունքները ցույց են տվել, որ կաթի ինքնարժեքը կազմել է 104 դրամ, իսկ տավարի մսի ինքնարժեքը, սովորական բտման պայմաններում, սպանդային քաշով կազմել է 1765 դրամ:

Կատարված հաշվարկները ցույց են տվել, որ կերարպահովածության մակարդակի բարձրացումը և կերարտադրության կառուցվածքի բարելավումը, կարել է ասել, այն հիմնական ուղղություններն են, որոնց միջոցով հնարավոր է բարձրացնել անասնաբուծական մթերքների մրցունակությունը: Այս ամենով պայմանավորված անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Հաշվի առնելով կատարված հաշվարկները, կաթի արտադրության շահութաբերությունը բարձրացնելու համար պետք է կրճատել կերի ձեռք բերման ուղղված ծախսերը:
- Ցածր ինքնարժեքով կերերի արտադրության կազմակերպում, որը կնպաստի անասնաբուծական մթերքների ինքնարժեքում կերերի արժեքների կրճատմանը, հետևաբար անասնաբուծական մթերքների ինքնարժեքի իջեցմանը և մրցունակության բարձրացմանը:
- Անհրաժեշտ է իրականացնել կերի հավասարաչափ ու անխափան ապահովում և օգտագործում ողջ տարվա ընթացքում:
- Բնական կերհանդակների հավասարաչափ և արդունավետ օգտագործում:
- Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացումն իրականացնել կերի կազմի և կերաբաժնում սննդանյութերի պարունակության ավելացման հաշվին:
- Անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման համար խիստ կարևոր է կերային կայուն բազան: Անհրաժեշտ է վերականգնել համակցված կերի արտադրությունը և ավելացնել եղած հնարավորությունները:
- Համակցված կերի արտադրության ժամանակ անհրաժեշտ է ռեսուրսախնայող և էներգախնայող տեխնոլոգիաների, նոր մեքենաների և սարքավորումների ներդման, ինչպես նաև արտադրության կազմակերպման և կառավարման ծախսերի կրճատման միջոցով նվազեցնել անասնաբուծական մթերքների ինքնարժեքում կերերի ծախսը, որնիրենով կհանգեցնի անասնաբուծական մթերքների ինքնարժեքի կրճատմանն ու մրցունակության բարձրացմանը:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և առաջարկվող միջոցառումները, ինչպես նաև դիտարկելով տավարի մսի ինքնարժեքի հաշվարկները սովորական բտման պայմաններում, առաջարկվում է ԹՈԹԼբուլ 00230211 կերը, որը նախատեսված է բտման առաջին փուլի համար և ԹՈԹլբուլ 00210212 կերը, որը նախատեսված է բտման երկրորդ փուլի համար: Այսինքն՝ առաջարկվող կերի դեպքում բտումն

իրականացվում է երկու փուլով: Քանի որ ինքնարժեքի հաշվարկման ժամանակ բտման գործընթացը սկսվել է 7-րդ ամսում, երբ բտվող մատղաշի քաշը բարձր է 150 կգ՝ 226 կգ կենդանի զանգված, ապա այս պարագայում օգտագործվել է ԹՈԹԼբուլ 00210212 կերատեսակը:

Առաջարկվող կերի օգտագործմամբ տավարի մսի ինքնարժեքի հաշվարկների արդյունքում ստացվել է 1564 դրամ: Հաշվարկներից պարզ է դառնում, որ առաջարկվող կերի օգտագործման ժամանակ արտադրության վրա կատարված ծախսերն ավելի քիչ են քան սովորական բտմամբ, միևնույն ժամանակ երկու տարբերակում էլ գրեթե հավասար են ծախսերում կերի տեսակարար կշիռները: Սակայն առաջարկվող կերի արդյունավետությունը պայմանավորված է տավարի օրական քաշաճով, ինչպես նաև կերում եղած պրոտեինային հավելումներով ու բարձր շահութաբերությամբ:

Անցում կատարելով անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնական ուղղություններին՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են հետևյալ ուղղությունները.

1. Տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացում, որի համար առաջարկվում է.

ա) Հաշվառման գործընթացի իրականացում: Տոհմային գործի զարգացման համար հանրապետության առաջնահերթ քայլը կենդանիների հաշվառման իրականացումն է, հատկապես տեղական մաքրացեղ կենդանիների: Այնուհետև նախընտրելի է կազմել այդ կենդանիների ցանկը, գրանցել մթերատվությունն ու տոհմային հատկանիշները: Մշակել տեղական տոհմային աշխատանքների ծրագիր՝ արժեքավոր կենդանատեսակների համար, ինչը կնպաստի տեղական ցեղերի բարելավմանը և հնարավորություն կընձեռի բարձրացնել կենդանիների մթերատվության մակարդակը նվազագույն ծախսումներով, որն էլ իր հերթին կնպաստի մրցունակության բարձրացմանը:

բ) Հաջորդ քայլը գյուղատնտեսական կենդանիների համարակալման գործընթացի իրականացնումն է: Առաջարկվում է գործընթացի իրագործումը սկզբնական փուլումիր վրա ստանձնի պետությունը՝ հանձինս ՀՀ գյուղատնտեսության նախարարության: Համարակալման աշխատանքերի սկիզբը կարելի է ազդարարել համապատասխան ծրագրի մշակմամբ:

գ) Արդյունավետ կլիներ անասնաբուծության յուրաքանչյուր ենթաճյուղի համար ձեռնարկել որոշակի միջոցառումներ՝ հաշվի առնելով նշված ենթաճյուղերի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ տավարաբուծության զարգացման առումով նպատակահարմար է ընտրել երկկողմանի ռազմավարություն, այն է՝ մի կողմից նպաստել տավարի «Կովկասյան գորշ» ցեղի գենոֆոնդի պահպանմանն ու կատարելագործմանը, քանի որ այս ցեղի անասուններն ավելի լավ են հարմարեցված հանրապետության պայմաններին, դիմացկուն են միջավայրի և կլիմայական խիստ պայմաններին, ունեն լավ ֆիզիկական և վերարտադրական հատկանիշներ: Միևնույն ժամանակ տոհմային հատկանիշների բարելավման համար առաջարկվում է արտերկրից ներմուծել և բուծել համաշխարհային դասական ցեղերի բարձր մթերատու տոհմային կենդանիներ:

Հանրապետությունում ոչխարաբուծության արտադրական ուղղությունը պետք է ամբողջովին վերանայվի՝ ոչխարների կաթնամսատու և մսաբրդատու ցեղերի տոհմային կենդանիների միջոցով իրականացնել հայրենական ցեղերի տոհմային և մթերատու հատկանիշների բարելավում: Այսինքն՝ ոչխարաբուծության վերակողմ-

նորոշում՝ ներճյուղային մասնագիտացման փոփոխման միջոցով, բրդատու ոչխարաբուծությունից անցում մսի արտադրության ուղղության:

Խոզաբուծության մեջ հանրապետությունը մոտակա տարիներին չունի համեմատական առավելություն, քանի որ օգտագործվող կերի մեծ մասը ներկրվում է: Դրա համար էլ ճյուղի զարգացման համար առաջնահերթ նախատեսված միջոցառումները պետք է ուղղված լինեն հենց կերային բազայի ամրապնդմանը:

Թռչնաբուծությունը հանրապետությունում զարգանում է արդյունաբերական հիմքերի վրա, ունի զարգացման մեծ ներուժ և ընթանում է ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաներին համապատասխան, ինչը պայմանավորված է մասնավոր թռչնաբուծական ֆաբրիկաների կողմից տարեց տարի ընդլայնվող ֆինանսական միջոցների ներդրմամբ և արտադրվող արտադրանքի ծավալների ընդլայնմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում ինչպես գործող թռչնաբուծական ֆաբրիկաները, այնպես էլ թռչնաբուծությամբ զբաղվող տնտեսությունները հիմնականում մասնագիտացված են ձվի արտադրության գծով, իսկ թռչնի միսը հիմնականում ներմուծվում է: Ուստի նպատակահարմար է պետական աջակցությամբ ընդլայնել թռչնի մսի արտադրության ծավալները, որի համար սկզբնական շրջանում պետք է մտածել հատիկային կերի կայուն բազայի ապահովման համար, որը կնպաստի թռչնի մսի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

2. Անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հաջորդ ուղղությունը՝ անասնաբուժական համակարգի բարելավումն ու անասնաբուժական միջոցառումների արդյունավետության բարձրացումն է: Ըստ այդմ. արդյունավետ կլիներ վերականգնել և բարձր մակարդակի հասցնել հիվանդությունների վերահսկման հետ կապված աշխատանքները, իրականացնել բավարար անասնաբուժական ծառայություններ մատչելի գներով, խթանել մասնավոր անասնաբուժական ծառայությունների մատուցումը, հանրապետության, հատկապես հեռավոր տարածաշրջաններում՝ անասնաբուժական լաբորատորիաների վերազինում, պետական միջոցառումներում ներառված առավել վտանգավոր հիվանդությունների ցանկի ընդլայնում և այլն:

3. Անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման հիմնական ուղղություններից է նաև անասնաբուծական մթերքների վերամշակման համակարգի բարելավումը: Այս դեպքում ևս կարևոր է անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացումը, քանի որ շուկային ներկայացնելով մրցունակ ապրանք և հետագայում բարձրացնելով մրցունակությունը, հիմքեր կստեղծվի իրացման ծավալների, ինչպես նաև մթերվող մթերքների ծավալների և հետևաբար անասնագլխաքանակի ավելացման ու մթերատվության բարձրացման համար: Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է պետության կողմից կիրառել նշված ձեռնարկություններում հարկային որոշակի արտոնություններ, որոնք հնարավորություն կտան ձեռնարկություններին արտադրական հզորությունների և տեսականու ընդլայնման, կապիտալ ներդրումների ծավալների ավելացման համար: Ինչպես նաև նպատակային վարկավորման արդյունքում հնարավոր կլինի խթանել փոքր և միջին վերամշակող ձեռնարկությունների ստեղծումը և նորագույն տեխնոլոգիաների ներդրման միջոցով բարձրացնել կատարվող աշխատանքների արդյունավետությունը:

5. Իրացումը, հանդիսանալով ցանկացած տնտեսության վերջնական նպատակ, հիմքեր է ստեղծում այդ նույն տնտեսություններին արտադրել մրցունակ արտադրանք և այն ներկայացնել շուկա: Այսինքն՝ մրցունակության բարձրացումը հիմքեր է տալիս բարելավելու իրացման գործընթացը: Ուստի առաջարկվում է պետության կող-

մից ապահովել անասնաբուծական մթերքների իրացման հետ կապված արդար մրցակցություն և բարելավել մրցակցային դաշտը: Իրացման խթանման համար կարևորվում է նոր պահեստների և սառնարանային տնտեսությունների կառուցումը, ինչպես նաև եղածների վերազինումը, փոխադրման կարողությունների բարելավումը և ճանապարհների բարեկարգումը, մեծածախ շուկաների ստեղծումը, որն իր հերթին կնպաստի անասնաբուծական մթերքների փաթեթավորման, որակի վերահսկման, պահեստավորման, արտաքին տեսքի բարելավման գործընթացին, տարբեր գյուղական համայնքներում փոքր և միջին սպանդանոցների ստեղծումը: Կաթի իրացման հետ կապված՝ տեղափոխման համար հատուկ մասնագիտական ցիստեռների օգտագործումը հնարավորություն կտա խուսափելու հնարավոր կորուստներից:

6. Ինչպես արդեն նշել ենք, գյուղատնտեսությունը հանդիսանում է բարձր ռիսկային ոլորտ, իսկ ռիսկայնության նվազման և կրճատման հիմնական ուղին ապահովագրական համակարգի ներդրումն է: Սակայն գյուղատնտեսության առանձնահատկություններով պայմանավորված՝ այսօր ոլորտում ապահովագրություն չի իրականացվում: Ուստի առաջարկվում է առաջին հերթին ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ներգրավելով հանրապետության գյուղացիական տնտեսությունների և ապահովագրական ընկերությունների ռեսուրսները՝ համապատասխան պետական աջակցությամբ՝ ընդգրկելով նաև միջազգային ապահովագրական գործակալությունների ուժերն ու փորձը:

7. Գյուղատնտեսության զարգացման և գյուղմթերքների մրցունակության բարձրացման գործում իր ուրույն տեղն ունի վարկավորման մեխանիզմների բարելավման գործընթացը: Դրա համար առաջարկվում է այդ գործընթացի բարելավման համար իրականացնել որոշակի միջոցառումներ: Մասնավորապես՝ գյուղատնտեսական վարկավորման նպաստավոր պայմանների ստեղծում, գյուղատնտեսությանն ուղղված վարկային միջոցների ծավալների ավելացում, գյուղատնտեսական վարկավորման մեխանիզմների կատարելագործում և մատչելիության մակարդակի բարձրացում, գրավադրման մեխանիզմների բարելավում՝ մատչելի տոկոսադրույքների և պետական երաշխիքների տրամադրման միջոցով, միջին և երկարաժամկետ վարկերի տեսակարար կշռի ավելացում,գրավի առարկայի անվանացանկի կանոնակարգում և ընդլայնում, մասնավորապես՝ գյուղատնտեսական կենդանիների և հողիորպես գրավադրման առարկայի օգտագործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները թույլ են տալիս հետևություն անել, որ հանրապետության բնակչության պարենային ապահովության մակարդակի բարձրացումը մեծապես պայմանավորված է տեղական անասնաբուծական մթերքների մրցունակության մակարդակով: Վերջինիս ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունների արդյունքները հանգեցրել են հետևյալ եզրակացությունների.

1. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է արտադրանքի մրցունակություն հասկացությունը և դրան բնորոշող հիմնական գործոնները՝ գնային, արտադրանքի սպառողական բնութագրիչներ, սպասարկման, անհատական և հոգեբանական գործոններ: Ինչպես նաև բացահայտվել և առանձնացվել են այն

հիմնական գործոնները՝ նորարարական գործընթացի դանդաղ ընթացքը, անասնապահական ճյուղի ինտենսիվության ցածր մակարդակը, գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ավանդական պայմանների գերակշռությունը, կերերի անբավարարությունն ու որակական հատկանիշների նվազումը, գինը և այն գործոնները, որոնք ազդում են անասնաբուծական մթերքների գնի փոփոխության վրա, իրացման գործուն համակարգի բացակայությունը, որոնք ազդում են անասնաբուծական մթերքների մրցունակության վրա:

2. Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս գնահատելու արտադրանքի (ապրանքի) մրցունակությունը, որն էլ իր հերթին նախադրյալներ է ստեղծում գնահատելու գյուղատնտեսության, մասնավորապես՝ անասնաբուծական մթերքների մրցունակությունը, որը պետք է հիմնվի որոշակի սկզբունքների վրա: Գյուղատնտեսության ճյուղի մրցունակության ապահովման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ գյուղատնտեսական մթերքների շուկան լինելով կատարյալ մրցակցային շուկայի ժամանակակից մոդել, շուկայում իրացման միակ ճանապարհը մրցունակ ապրանքի առկայությունն է: Իսկ այդ մրցունակությունն էլ պայմանավորված է այն առանձնահատկություններով, որոնք բնորոշ են գյուղատնտեսության ճյուղին:

3. Կատարված ուսումնասիրություններից բացահայտվել է, որ անասնաբուծական մթերքների մրցունակության ապահովման գործընթացում առկա են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ կերային բազայի բարելավումը և կերապահովածության մակարդակի բարձրացումը, ապահովագրական գործուն համակագի բացակայությունը, մատչելի վարկերի անբավարարությունը, կենդանիների սելեկցիայի աշխատանքների և գենոֆոնդի պահպանման բարելավումը, անասնաբուժական աշխատանքների վիճակի բարելավումն ու մասնավոր անասնաբուժության զարգացումը, անասնաբուծական մթերքների իրացման ենթակառուցվածքի անկատարությունը:

4. Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս կատարել գյուղացիական տնտեսությունների կողմից անասնաբուծական մթերքների իրացման միջին գների վրա ազդող գործոնների էկոնոմետրիկ վերլուծություն: 15 տարիների կտրվածքով կատարվել է հաշվարկներ և որպես ազդող գործոններ ընտրվել անասնաբուծական մթերքների ապրանքայնության մակարդակը, մթերատվությունը, իսկ տավարի մսի արտադրության համար՝ համախառն արտադրանքը: Կատարված վերլուծության արդյունքում պարզվել է, որ նշված գործոնների ազդեցությամբ փոփոխվում են գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գները, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են անասնաբուծական մթերքների մրցունակության փոփոխությանը:

5.Ապրանքայության մակարդակի, մթերատվության, իսկ տավարի մսի արտադրության համար՝ համախառն արտադրանքի, մեկ տոկոսի փոփոխությունը գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գների վրա գնահատելու համար կատարված առաձգականության գործակիցների հաշվարկները ցույց են տվել՝

- տավարի մսի համար՝ 1 % համախառն արտադրանքի աճը հանգեցնում է 1.3 % իրացման գների աճին,
- կաթի համար՝ 1 % կաթնատվության մակարդակի աճը հանգեցնում է 1.62 % իրացման գների աճին,
- ձվի համար՝ 1 % ձվատվության աճը հանգեցնում է 0.44 % իրացման գների աճին:

6. Անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման գործում կարևոր տեղ ունեն հատկապես կերարտադրության կառուցվածքի բարելավումն ու կերարպահովածության մակարդակի բարձրացումը: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում կերի ստացման հիմնական աղբյուրները կազմում են վարելահողերն ու բնական կերհանդակները, ինչպես նշել նաև հանրապետությունում մշակությունից դուրս մնացած վարելահողերը, որոնք նույնպես օգտագործվում են որպես խոտհարք: Նախընտրելի և արդյունավետ կլիներ, եթե նշված վարելահողերը դրվեին արժեքավոր կերային մշակաբույսերի մշակության տակ՝ օրինակ եգիպտացորենի: Հանրապետության եգիպտացորենի պահանջարկի զգալի մասը ներմուծվում է:

Ստեղծված իրավիճակում հնարավոր է քայլեր ձեռնարկել ընդլայնել եգիտացորենի ցանքատարածությունները և ավելացնել արտադրության ծավալները, ինչը տնտեսապես արդյունավետ է: Այն թույլ կտա կրճատել եգիպտացորենի ներմուծումը և ավելացնել կենդանիների մթերատվությունը:

7. Կատարված ուսումնասիրություններով պայմանավորված՝ նպատակահարմար է վերականգնել համակցված կերի արտադրությունը և ավելացնել եղած հնարավորությունները: Մասնավորապես՝ առաջարկվում է միջոցներ ձեռնարկել առկա գործարանների կողմից արտադրված համակցված կերի արտադրության ծավալների ավելացման ուղղությամբ, քանի որ այսօր նշված ձեռնարկությունների թողարկած արտադրանքը բավական չէ հանրապետության համակցված կերի նկատմամբ պահանջարկի կիսով չափով բավարարմանը: Համակցված կերի արտադրության ժամանակ նախընտրելի է ռեսուրսախնայող, էներգախնայող տեխնոլոգիաների կիրառումը: Նշված տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն կտա նվազեցնել անասնաբուծական մթերքների ինքնարժեքում կերերի ծախսը, ինչը կհանգեցնի անասնաբուծական մթերքների ինքնարժեքի կրճատմանն ու մրցունակության բարձրացմանը:

8. Հաշվարկելով տավարի մսի ինքնարժեքը սովորական կերի և ԹՈԹԼբուլ 00230211 և 00210212 կերերի օգտագործմամբ, հանգել ենք այն եզրակացության, որ սովորական կերի օգտագործման ժամանակ տավարի մսի ինքնարժեքը կազմել է սպանդային քաշով 1765 դրամ, իսկ առաջարկվող կերի դեպքում՝ 1564 դրամ: Առաջարկվող կերի արդյունավետությունը պայմանավորված է տավարի օրական քաշաճով: Այս դեպքում քաշաճի մակարդակը առավել բարձր է քան սովորական կերի դեպքում: Ցանկալի արդյունքին հասնելու հիմնական, բայց ոչ միակ գրավականը ճիշտ կերակրումն է: Լավագույն կերերը, կոմբինացված կերերն են, որոնք պարունակում են անհրաժեշտ վիտամինային, ամինաթթվային և պրոտեինային հավելումներ, ունեն էներգետիկ բարձր արժեք, ինչը բնորոշ է առաջարկվող կերատեսակին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մնացականյան Կ.Պ. Մրցունակության հասկացության տեսական հարցերը և դրանց կիրառման մոտեցումներն անասնապահության ճյուղում: // Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան: ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու- 2(14), Երևան, 2012.- էջ 199-206

2. Մնացականյան Կ.Պ.ՀՀ գյուղատնտեսության ներկայիս բարեփոխումները որպես մրցունակության բարձրացման ուղի: // Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի մարտահրավերները, Հանրապետական գիտաժողով, Նյութերի ժողովածու, Գյումրի, 2012.- էջ 223-226
3. Մնացականյան Կ.Պ.ՀՀ անասնապահության ճյուղի մրցունակության բարձրացման խնդիրներն ու դրանց լուծման հնարավորությունները: // Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ, Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ, Գիտական աշխատանքների ժողովածու, Գիրք 5, Երևան «ՕՐ-ԴԱՐ» հրատարակչություն 2012.- էջ 92-104
4. Ծպնեցյան Հ.Ս., Մնացականյան Կ.Պ. Գյուղացիական տնտեսություններիկողմից անասնաբուծական մթերքի իրացման միջին գների վրա ազդող գործոնների էկոնոմետրիկվերլուծությունը: // Ֆինասներ և էկոնոմիկա, 2(152) փետրվար 2013.- էջ 63-64
5. Ծպնեցյան Հ.Ս., Մնացականյան Կ.Պ. Կերապահովվածության մակարդակի բարձրացումը և կերարտադրության կառուցվածքի բարելավումը՝ որպես անասնաբուծական մթերքների մրցունակության բարձրացման կարևոր գործոն: // Ֆինասներ և էկոնոմիկա, 6(168) հունիս, 2014.- էջ 95-96

МНАЦАКАНЯН КАРИНЕ ПЕТРОСОВНА

“ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ЖИВОТНОВОДЧЕСКИХ ПРОДУКТОВ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ”

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 – “Экономика и управление хозяйством, его сферами”.

Публичная защита диссертации состоится 23-го февраля 2016 года в 14^{00}часов на заседании СпециализированногоСовета 002 по Экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу:0009, Ереван, ул. В. Теряна 74.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблемам повышения конкурентоспособности животноводческих продуктов и основным направлениям их решения в Республике Армения.

Животноводство было и остается одной из ведущих отраслей сельского хозяйства республики. Оно играет важную роль в обеспечении республики высококачественной животноводчской продукцией, являющейся значительной частью национального богатства.

Переход Республики Армения к рыночным отношениям предполагает развитя животноводческой отраслью в соответствии с законами рыночной экономики, что, в свою очередь, требует осуществления во всех отраслях сельского хозяйства и, в частности в животноводстве, соответствующей политики, способствующей повышению конкурентоспособности отрасли, что является одним из основных средств повышения благосостояния каждого общества. Оно создает стабильную основу для дальнейшего развития любого государства. Единственный путь повышения конкурентоспособности страны – производство конкурентоспособной продукции, которого возможно достигнуть путем решения задач, стоящих перед отраслью.

Основная цель диссертации – на основе всестороннего изучения состояния животноводческой отрасли и проводимых в этом направлении исследований выявление проблем, связанных с повышением конкурентоспособности животноводческой продукции,- и разработкой путей их решения.

Учитывая изложенное, в работе выделены и представлены такие насущные проблемы, как экономическая сущность категории конкурентоспособность продукции, влияющие на нее факторы и методы их оценки, в частности рассмотрены основные факторы,

влияющие на конкурентоспособность животноводческой продукции в Республике Армения. Проанализировано и изучено состояние сельского хозяйства и животноводства, а также их особенности. Опираясь на последнее, дана оценка проблемам повышения конкурентоспособности животноводческой продукции. В работе представлена также количественная характеристика факторов, влияющих на средние цены реализации основных видов животноводческой продукции. Выявлены основные пути их повышения, среди которых выделены состояние обеспеченности кормами и необходимость их улучшения с целью повышения конкурентоспособности животноводческих продуктов.

Основные научные результаты диссертации обусловлены рядом предложений, способствующих решению вышеизложенных проблем. Научной новизной, в частности, признаны следующие положения:

- выявлены основные проблемы повышения конкурентоспособности животноводческой продукции в РА, и в результате всесторонних исследований предложены пути их решения;
- обоснован ряд факторов, влияющих на повышение конкурентоспособности животноводческой продукции в РА;
- дана оценека количественного влияния ряда факторов на средние цены реализации производимой крестьянскими хозяйствами республики животноводческой продукции, в частности уровня товарности, продуктивности сельскохозяйственных животных, валовой продукции;
- проанализированы и в результате проведенных исследований предложены основные пути повышения конкурентоспособности животноводческой продукции: улучшение структуры кормопроизводства, повышение уровня кормообеспечения, осуществление комплексных мероприятий по развитию племенного дела, упорядочение ветеринарной системы, реализация животноводческой продукции, улучшение состояния перерабатывающей отрасли, постепенное внедрение системы страхования, совершенствование механизмов кредитования.

MNATSAKANYAN KARINE

"THE PROBLEMS OF RAISING THE COMPETITIVENESS OF LIVESTOCK PRODUCTS AND THE MAIN DIRECTIONS OF THEIR SOLUTION IN THE REPUBLIC OF ARMENIA"

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty: 08.00.02 – "Economics and Management of the Economy, its Spheres"

The defense of the thesis will take place on 23 of February 2016, at 14^{00} o'clock at the Meeting of 002 specialized Council of National Agrarian University of Armenia, 74 Teryanstreet, Yerevan, 0009

SUMMARY

The thesis is devoted to the problems of raising the competitiveness of livestock products and the main directions of their solution in the Republic of Armenia.

Animal husbandry was and is one of the leading branches in the agriculture of the Republic. It has big role in supplying the republic with high-quality foodstuffs. Livestock products are the significant part of the national wealth.

The transition of the Republic of Armenia to market relations requires conducting the operation of animal husbandry branch according to the market economy requirements. Market economy requires pursuing such policy in all branches of economy, particularly in agriculture, which will contribute to the raising of branch competitiveness because the latter is one of the main means of increasing well-being of the public. It creates stable bases for the further development of any country. The only way of raising the country competitiveness is the release of competitive products, based on which the modern economist emphasize the manufacturing of competitive products. The only way to reach the latter is the solution of the problems present in the field.

The main goal of the thesis is the revelation of problems of competitiveness of livestock products in the result of comprehensive study of the current state of animal husbandry, and researches conducted in the field as well as the suggestions of solutions to these problems.

Taking into account the above-mentioned such problems as economic essence of product competitiveness category, factors influencing product competitiveness and their evaluation methods particularly emphasizing the main factor influencing livestock products in the Republic of Armenia. The state and characteristic features of agriculture and animal husbandry have been

analyzed and studied as they influence the competitiveness of livestock products greatly. Based on the studies of the characteristic features the problems of raising the competitiveness of livestock products have been assessed. The work also identifies the quantitative characteristics of factors influencing the average prices for selling the main livestock products. The main directions of raising the competitiveness of livestock products have been revealed in the RA, among which the state of being guaranteed with fodder and the necessity of its improvement to increase the competitiveness of livestock products has been highlighted.

The main scientific findings of the thesis paper are conditioned with the development and application of the well-grounded ways to solve the above-mentioned problems, especially the following provisions were considered as scientific innovations:

- The main problems of the competitiveness of animal husbandry products in the RA have been revealed and the ways of their solutions have been recommended in the result of comprehensive studies;
- The composition of factors influencing the increase of the competitiveness of animal husbandry has been revealed and substantiated in the result of the conducted analyses;
- The qualitative influence of a number of factors, particularly level of marketability, productivity, gross produce, on the average prices of animal husbandry products sold by farms;
- The main directions of increasing the competitiveness of animal husbandry products are analyzed and recommended based on the conducted studies which will be done through the improvement of fodder make-up, increase in the level of provision with fodder, implementation of complex measures in development of pedigree farming, regulation of veterinary system, improvement of selling and processing systems of animal husbandry products, gradual introduction of insurance system, and perfection of credit mechanisms.